

ԱՌԱԿ

Ա. Դ. Ա. Մ. Ա. Ն. Դ.

Մի մեծ փայլուն Աղամանդ
Որ կը ցոլար իշխանին մատ ,
Իբրեւ մատնի թանկագին ,
Ի վայր կ'ինկնայ օրին մին՝
Հասարակաց ճամբուն վերայ ,
Եւ ցեխին մէջ կ'անյայտանայ :
Կոխեն կ'անցնին զինքը ձիեր ,
Երկաթագամ պայտերով .
Յետոյ խոշոր մեծ մեծ սայլեր ,
Ծանր՝ ահագին բեռներով :
Խեղճ Աղամանդը կը տըքայ
Ցեխին ներքեւ թաղուած ,
Երկնից լուսէն զըրկուած .
Այլ միշտ տոկուն կը մընայ ,
Ո՛չ կը փըշրի , ոչ կը կտարի ,
Տեղիք չի տար ոչ մի բանի .
Կ'անցնի աշունն , կու գայ ձմեռն
Ձիւնն կը ծածկէ ճանապարհներն ,
Այլ ինչպէս որ ցեխին ներքեւ՝
Նոյնպէս ձիւնին բեռը թեթեւ
Նա կը տանի անտըրտունջ :
Երբոր դարնան քաղցրաշունչ
Հովը՝ ձիւներն կը հալէ ,
Եւ ճառագայթ արեւուն
Շիտակ նըմա կը զարնէ ,
Նա առաջուան պէս փայլուն ,
Ճամբուն վերայ իբրեւ հուր
Լոյս կու սըփռէ ընդհանուր :
Եւ շուտով այն Աղամանդ
Կը լինի ազնիւ մի զարդ
Արքայական շքեղ թագին ,
Շուրջը ակունք թանկագին :
Առաքինի , անբաղդ մարդու խըրատ՝

Մէջ տեղ առի այս թանկագին Ադամանդ .
 Զի երբոր նա հալածուելով անդադոր
 Զոհ կը լինի վաս նախանձուն բռնաբար ,
 Պէտք չէ ընկճի ու թուլանայ ,
 Այլ քաջապէս հարկ է տոկայ ,
 Կու գայ ատենն՝ կ'անցնին կրրից աղտն ու ցեխ ,
 Եւ նորա սիրտն առաքինի , բարքն անմեղ ,
 Իբր ադամանդ պայծառ փայլուն
 Կը յայտնուի ամենեցուն :

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ ԷՋ ՄԸ

1870 Ի Ն Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ի Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Բաւական ատեն է 'ի Գերմանիա՝ և այլուր հասարակաց կարծիքը կը հալածէ զՊիզմարք իշխան . նոյն իսկ գերմանական նշանաւոր թերթ մը՝ յայտնի կերպով ամբաստանեց զնա Ֆրոն Ռուն զօրավարին Յիշատակարանաց հրատարակութեամբ, որ իբր թէ Պիզմարք ընդ Մոլթրէի և ընդ Ֆրոն Ռունի հարած ըլլան Էմսի այն նշանաւոր հեռագիրը՝ որ ստիպեց Գաղղիոյ կայսրը պատերազմ հրատարակելու :

Արդ գաղղիական թերթ մը վերջերս հրատարակեց նշանաւոր անձի մը ուսումնասիրութիւնը՝ որ շատ պայծառ կերպով և նորանոր վկայութեանց զօրութեամբ՝ այն հեռագրին պատմութեան և պատերազմին պատճառաց վրոյ նոր լոյս մը կը սփռէ : Ըստ պատմիչին՝ Էմսի հեռագիրը ոչ եթէ խորդախեցաւ՝ այլ միայն ձեռքէ ձեռք անցաւ . թագաւորին սենեկէն ելաւ, Պիզմարք զայն յուլիս 13ին ընդունեցաւ, փոփոխութիւններ բրաւ և զայն պատերազմի պատահական պատճառ առաւ : Գերման նախկին քարտուղարին խաղերն ամբողջ 'ի միասին կը յայտնուին, և թերթը կը յարէ թէ Նաբոլէոն կրնար իրաւամբ յիշել Մոնդէպիէօի ըսածը . « Պատերազմին ճշմարիտ պատճառը հրատարակողը չէ, այլ զայն անխուսափելի ընողը » :

Ամենուն յայտնի է որ Հոհէնձոյլէրն իշխան՝ Սպանիոյ գահուն իբրեւ ընտրելի ներկայացաւ 1869 ին սկիզբները . բրուսիացի իշխանի մը ներկայութիւնն 'ի Մատրիա՝ Պերլինի կառավարութեան Գաղղիոյ դէմ՝ ունեցած գաղտնի ծրարագրոց այնպէս աղէկ կը համապատասխանէր՝ որ շատերը կը կարծեն թէ Պիզմարք մասն ունեցած ըլլայ իղապէլլա թագուհին կործանող խռովութեան : Սակայն այս ստոյգ է որ Պիզմարք ժամանակին գէպերէն օգուտ քաղող մարդ էր .